«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

_____ Մ.Գ.Մանուչարյան
18 հունիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քնարիկ Կառլենի Եդիգարյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Լիանա Խաչատրյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Եվգենյա Հակոբյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.,* Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ,* Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու,* Ստեփան Պապիկյան՝ *տեխ.գիտ.թեկնածու,* Գևորգ Մարտիրոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու:*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային կապիտալը նոր տնտեսության հենասյուներից է, միևնույն ժամանակ հանդիսանում է հասարակության սոցիալ–տնտեսական զարգացման կարևորագույն գործոն: Մարդկային կապիտալի դերակատարումը, կառուցվածքի և գործառույթների ընդլայնումը հասարակության զարգացման գործոնից վերափոխումը արտադրական և սոցիալական առաջատար գործոնի հանգեցրեց նոր հայեցակարգի ձևավորման անհրաժեշտության, քանի որ ի տարբերություն արտադրության այլ գործոնների, որոնք ԳՏԱ ազդեցության ներքո փոփոխվում են քանակապես և որակապես, սակայն բովանդակային իմաստով մնում են նույնը, ՄԿ–ը փոփոխվում է նաև ըստ էության և ինքնին գեներացնում նոր գիտելիքներ:

Մարդկային կապիտալը մարդու մտահորիզոնի և արժեհամակարգի ամբողջություն է, որը միևնույն ժամանակ արտադրության զարգացման կարևոր, ինտենսիվ գործոն է: Մարդկային կապիտալի միջազգային հոսքերի վերաբերյալ հետազոտությունները համաշխարհային գրականության մեջ դեռևս քիչ են: Սակայն ոլորտը բավականին արդիական է ՄԿ-ի միջազգային շարժի տեսանկյունից: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ն հանդիսանում է ՄԿ «արտահանող» երկիր, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու, թե որքանով է ազդում ՄԿ-ի արտահոսքը տնտեսության վրա, և ինչ հետևանքներ է կրում տնտեսությունը վերոնշյալ երևույթից: Այս ամենով էլ պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է բացահայտել ՄԿ-ի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում, պարզել ՄԿ-ի և միգրացիայի փոխառնչությունները: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել ՄԿ-ի էությունը և «մարդկային կապիտալ» եզրույթի էվոլյուցիան,
- քննարկել ՄԿ-ի տեսակները և դրանց դասակարգման մոտեցումները,
- հետազոտել ՄԿ-ի գնահատման մեթոդաբանական հիմքերը,
- բացահայտել ՄԿ-ի քանակական և որակական զարգացման միտումները համաշխարհային տնտեսությունում,
- վեր հանել ՄԿ-ի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում,
- բացահայտել ՀՀ-ում ՄԿ-ի զարգացման հեռանկարները համաշխարհային տնտեսության միջազգայնացման համատեքստում,
- վերլուծել ՄԿ-ի դերը ՀՀ տնտեսության միջազգայնացման գործընթացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի

շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները հետևյալն են.

- իրականացվել է մարդկային զարգացման և մարդկային կապիտալի համաթվերի համեմատական վերլուծություն, ինչի հիման վրա մշակվել է ՄԿ-ի համաթվի հաշվարկման նոր եղանակ,
- որոշվել է (առաջարկվել է) ՀՀ ՄԿ–ի միգրացիայի վրա ազդող ցուցանիշների համակարգ, հաշվարկվել դրանց մեծությունը ՀՀ և ռեցիպիենտ երկրների համար,
- գնահատվել է ՀՀ մարդկային կապիտալի միգրացիայի վրա ՀՀ և ռեցիպիենտ երկրների տնտեսական ցուցանիշների միջև ճեղքի ազդեցության չափը, և հակառակը՝ միգրացիայի ազդեցության չափը ՀՀ և ռեցիպիենտ երկրների միջին աշխատավարձերի ճեղքի, մարդկային կապիտալի թերօգտագործման ճեղքի, աշխատաշուկայում ներգրավվածության ճեղքի և ՄԿ մեծության ճեղքի վրա,
- գնահատվել է ՀՀ և ռեցիպիենտ երկրների ՄԿ–երի միջև ճեղքը՝ պայմանավորված եկամուտների, աշխատուժի թերօգտագործման և աշխատաշուկայում ներգրավվածության մակարդակների տարբերություններով՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Մարդկային կապիտալի տեսության տեսամեթոդական համադրույթները» գլխում անդրադարձ է կատարվել տնտեսության մեջ ՄԿ–ի դերին, որպես կապիտալ տեսակ այն դիտարկելու պատճառներին, գիտական հիմքերին, համաշխարհային տնտեսագիտական գրականության մեջ առկա բնորոշումներին, ինչպես նաև տրվել է մարդկային կապիտալի էվոլյուցիայի փուլային դասակարգում՝ ըստ զարգացման ժամանակագրության:

Ատենախոսության երկրորդ՝ «Մարդկային կապիտալը համաշխարհային տնտեսությունում» գլխում ՄԿ-ի չափելիության ուսումնասիրության նպատակով ներկայացվել են մարդկային կապիտալի (ՄԿՀ) և մարդկային զարգացման համաթվերը (ՄԶՀ), իրականացվել է դրանց համեմատական վերլուծություն՝ ելնելով այդ համաթվերի ցուցանիշների համակարգից, ներկայացվել է դրանց ստեղծման և զարգացման ընթացքը, ինչպես նաև դրանց տարբերություններն ու թերությունները:

Ատենախոսության երրորդ՝ «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում տնտեսության գլոբալացման պայմաններում» գլխում ներկայացվել է մարդկային կապիտալի գտործոններն ընդգրկող հիմնական ոլորտների մանրամասն ուսումնասիրություն, այսինքն՝ նկարագրվել են ՀՀ առողջապահության, կրթության և սոցիալական համակարգերը, դրանցում առկա բացերը, խնդիրները, դրական կողմերը, վիճակագրական տվյալները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Ատենախոսությունում ներկայացված են մարդկային կապիտալի զարգացումը բնութագրող հիմնական ցուցանիշները՝ զբաղվածների սպասելիքները գործատուից, հեռավար աշխատանքի պայմանները, նախակրթարաններում ընդգրկվածությունը, աշխատուժի ներգրավման ռազմավարությունը, աշխատաշուկայում աշխատունակ տարիքի բնակչության ներգրավվածությունը, աշխատուժի թերօգտագործումը և այլն Հայաստանի Հանրապետությունում և զարգացած երկրներում (էջ 53, 56, 69, 89, 95 և այլն): Ցանկալի էր մեր հանրապետության այս ցուցանիշների համեմատությունները կատարել նման տնտեսական մակարդակ և աշխարհաքաղաքական խնդիրներ ունեցող զարգացող երկրների հետ: ՀՀ մարդկային կապիտալի զարգացումը և կառավարումը, ունենալով իրենց յուրահատկությունները, անհրաժեշտ էր համեմատել նաև զարգացման և ռեսուրսների հասանելիության միևնույն մակարդակի վրա գտնվող պետությունների հետ, որը կարող էր ցույց տալ ՀՀ մարդկային կապիտալի առավել նպատակահարմար օգտագործման և կառավարման ուղիներ՝ համեմատելով այդ պետությունների անցած զարգացման ճանապարհների հետ:

2. Ատենախոսության աղյուսակներում ներկայացված են մարդկային կապիտալի զարգացումը նկարագրող հիմնական գործոնների փոփոխությունը՝ 2012-2022թթ. կտրվածքով, մասնավորապես ազգային եկամուտը մեկ շնչի հաշվով, աշխատուժի և զբաղվածների քանակը, ասպիրանտների և նրանց կողմից իրականացված հետազոտական աշխատանքների քանակը, երեխաների քանակը նախադպրոցական հաստատություններում և այլն: Վերլուծությունը ավելի խոսուն կլիներ, եթե դրանք համեմատվեին՝ հաշվի առնելով ներկայացված տարիներին բնակչության ընդհանուր թվաքանակի փոփոխությունը:
3. Ատենախոսությունում վերլուծված է հանրապետությունում մարդկային կապիտալի զարգացման վրա ազդող զուտ միգրացիան, նշված է, որ մեկնողների մեջ մեծամասնություն են միջին և բարձրագույն կրթություն ունեցողները: Վերլուծության արդյունքները ավելի հստակ կլինեին, եթե ներկայացվեր հատկապես վերջին տարիներին հանրապետության էմիգրանտների և իմիգրանտների մասնագիտական կառուցվածքը, ինչպես նաև ընդունող երկրները և եկվորների ազգությունը:
4. Հաշվի առնելով ատենախոսությունում մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը միջազգայնացման համատեքստում և արդյունաբերության հերթական հեղափոխության անցումը, ցանկալի էր ուսումնասիրվեր նաև մարդկային կապիտալի զարգացման գործում արհեստական բանականության դերը:
5. Ատենախոսությունը կշահեր, եթե ՀՀ-ում մարդկային կապիտալի զարգացման և օգտագործման արդյունավետությանը անդրադարձ կատարվեր ՀՀ-ում գործող խոշոր կազմակերպությունների օրինակով, քանի որ ՀՀ-ն հանդիսանում է զարգացող շուկայական հարաբերությունների մեջ գտնվող պետություն, և երկրի մարդկային կապիտալի ներուժի ճշգրիտ կառավարման վրա ազդող լծակները գտնվում են ոչ միայն պետության, այլ նաև մասնավոր կազմակերպությունների վերուսհսկողության ներքո:
6. Ատենախոսության 58-րդ և 59-րդ էջերում մարդկային կապիտալի արդյունավետ կառավարման համար հեղինակի կողմից առաջարկվում է կազմել գերհզոր թիմեր և անդրադարձ է կատարվում նման թիմերի կազմման գործընթացներին՝ անդրադարձ չկատարելով մեծաթիվ քանակությամբ աշխատակիցների աշխատանքից ազատմանը, քանի որ աշխատանքային գործընթացների ավտոմատացման պարագայում շարքային աշխատանք կատարող բանվորները ազատվում են աշխատանքից՝ իրենց տեղը զիջելով ավտոմատացվող տեխնոլոգիաները սպասարկող տեխնիկական ոլորտի աշխատակիցներին: Ազատված աշխատակիցների վերապատրաստումը մասնավոր ոլորտի

կազմերպությունների կողմից չի իրականացվում և նրանց համար նոր աշխատանք գտնելը կդառնա առավել բարդ գործընթաց, իսկ այս բոլոր ծախսերը ներկայումս իրականացնում են հենց շարքային աշխատակիցների կողմից: Ուստի, աշխատանքի գիտագործնական նշանակությունն ավելի կբարձրանար, եթե հեղինակը անդրադառնար ոչ միայն տեխնոլոգիաների կիրառման դրական ազդեցությանը, այլ նաև բացասական կողմին, որը առավել մանրամասն կնկարագրեր ատենախոսության վեցերորդ խնդիրը, որն ուղղված է բացահայտելու ՀՀ-ում ՄԿ-ի զարգացման հեռանկարները համաշխարհային տնտեսության միջազգայնացման համատեքստում:

7. Ատենախոսության 3-րդ գլխում, մեր կարծիքով, անհրաժեշտ էր առավել մեծ ուշադրություն դարձնել ՀՀ տարածքային անհամաչափ զարգացման խնդրին որպես մարդկային կապիտալի զարգացման վրա ազդող հիմնախնդիր, քանի որ մարդկային կապիտալի կառավարումը կարևոր է ոչ միայն պետական մակարդակով, այլ նաև միջազգայնացման համատեքստում: Մեր կարծիքով, անհրաժեշտ էր նաև ուսումնասիրել ՀՀ-ում մարդկային կապիտալի որակավորման մակարդակը, որը մեծամասամբ կրթություն ստանալու համար ֆինանսավորվում է պետական միջոցների հաշվին, չի համապատասխանում մասնավոր հատվածի մասնագիտական պահանջներին, որի պատճառով ներկայումս մասնավոր հատվածն է կազմակերպում իր վերապատրաստման գործընթացները՝ ավելորդ ֆինանսական բեռ ստեղծելով արդեն իսկ կրթություն ստացած բնակչության համար: Այս ուսումնասիրությունը առավել ակնհայտ կդարձներ ՀՀ-ում մարդկային կապիտալի կառավարման ուժեղ և թույլ կողմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քնարիկ Կառլենի Եդիգարյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է, որն ուղղված է ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրների բացահայտմանը:

Ատենախոսության շրջանակներում ՄԿ-ի միջազգային շարժի վերաբերյալ կատարված հետազոտությունը և դրա հետևանքների քանակական չափումները կարող են օգտակար լինել ՄԿ–ի զարգացմանը միտված քաղաքականության մշակման, կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության ոլորտներում բարեփոխումների իրականացման գործընթացում: Աշխատանքի արդյունքները հնարավորություն են տալիս մշակելու միգրացիոն քաղաքականություն ի նպաստ ՀՀ

տոնտեսությանը, ինչես նաև կարգավորելու աշխատաշուկայի ինստիտուցիոնալ միջավայրը ՄԿ–ի արտահոսքի կանխարգելման նպատակով:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 9 (ինը) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Քնարիկ Կառլենի Եդիգարյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում» թեմայով ատենախոսության և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 9 (ինը) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ–ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.06 – «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (18.06.2024թ., արձանագրություն թիվ 9):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Լ.Խաչատրյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու **Գ.Մարտիրոսյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լ.Խաչատրյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու Գ.Մարտիրոսյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու **Ե.Ա.Հակոբյան**
«18» հունիսի, 2024թ.
Կ. Տ.